ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7

ք. Երևան «25» 06 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝ Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Ռ. Միրզախանյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում

է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 32994000 (երեսուներկու միլիոն ինը հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Ք. Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005627 ՀՎՀՀ 02512868 Գլխավոր քարտուղարի լիազորությունները կատարող՝ Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	<<Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամ Ք. Երևան, Տիգրան Մեծի 17 Կոնվերսբանկ ՓԲԸ Հ/Հ 1930055618190100 ՀՎՀՀ 02527624 Ռեկտոր՝ Ռ. Միրզախանյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«25» 06 2019թ. կնքված
«ՀՀԿԳՆԳՀՇՁԲ-19/7» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման ժամկետը*
1	79631200-1	Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայություններ	**Վերապատրաստման ծառայության մատուցումը** նախատեսվում է իրականացնել ներքոնշված **չափանիշներին*** համապատասխան:	դրամ	1		Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 27.07.2019թ ներառյալ

***Վերապատրաստման ծառայության մատուցման չափանիշները.**

I. Ընդհանուր պայմաններ.

Հայկական կրթօջախներում դասավանդման որակի բարելավմանն աջակցության միջոցառումը նախատեսում է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում:

Ծառայությունն ամբողջությամբ նախատեսում է նախապատրաստական և վերապատրաստման փուլեր:

Վերապատրաստման փուլը բաղկացած է երկու բովանդակային մասից.

1) ուսումնական 6 ծրագրից, որն իրականացվում են դասընթացների միջոցով.
2) արտալսարանային ուսումնական և մշակութային միջոցառումների մեկ միասնական ծրագրից:

Կազմակերպչական տեսանկյունից ծառայությունը նախատեսում է.

ա. վերապատրաստման դասընթացների կազմակերպում (ուսումնական ծրագրի կազմում, դասախոսների ընտրություն, վարձատրություն, համակարգող անձնակազմ),

բ. արտալսարանային ծրագրի կազմակերպում (մշակութային ծրագրի կազմում, ուղեվարներ (գիդեր), տոմսերի ձեռքբերում),

գ. կեցություն

դ. սնունդ, սուրճ-դադարներ, ֆուրշեթ

ե. տրանսպորտ

զ. ուսումնական տարածք,

է. գրասենյակային ծախսեր (պատճենահանում, վկայականների տպագրություն, գրենական պիտույքներ և այլ):

Վերապատրաստումն իրականացվելու է 2019թ. հունիսի 30-ից հուլիսի 27-ը ըստ հետևյալ ժամանակացույցի՝

30 հունիսի՝ ժ.13.00-ից	հյուրատուն մուտքի և տեղավորման օր
01 հուլիսի՝	ծրագրի պաշտոնական բացում
26 հուլիսի՝	ծրագրի պաշտոնական փակում
27 հուլիսի՝ ժ.12.00-ից	կացարանից ելքի օր:

Վերապատրաստումը նախատեսվում է առավելագույնը 60 մասնակցի համար, որոնցից առավելագույնը 40-ը օգտվում են գիշերակացից:

Պատվիրատուն մասնակից ուսուցիչների անվանացանկը տրամադրում է մինչև հունիսի 10-ը: Մինչև վերապատրաստման մեկնարկն անվանացանկում կարող են կատարվել անվանական փոփոխություններ:

Վերապատրաստման ծրագրի պաշտոնական բացման և փակման հանդիսավոր արարողությունները կազմակերպվում են Կատարողի կողմից՝ Նախարարության հետ համատեղ: Բացման արարողության սցենարի նախագիծը ներկայացվում է Պատվիրատուին վերապատրաստման մեկնարկից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

Ծառայության մատուցումը իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. թիվ 1246-Ն հրամանով հաստատված «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման կազմակերպման մասին» կարգին համապատասխան:

Կատարողի կողմից ստեղծված համակարգող անձնակազմը պատասխանատու է ուսումնական ծրագրի անխափան իրագործման համար: Անձնակազմի ներկայացուցիչն ուղեկցում է մասնակից ուսուցիչներին բոլոր կրթամշակութային միջոցառումներին: Հետևում է մանսակիցների հաճախելիությանը:

II. Վերապատաստման դասընթացներ

Վերապատրաստման դասընթաներն ընթանալու են տարբերակված վեց ուսումնական ծրագրերով.

«Ա.» Ուսուցում մանկապարտեզում

«Բ.» Ուսուցում մեկօրյա դպրոցում
«Գ.» Տարրական ուսուցում
«Դ. » Հայոց լեզվի և գրականության դասավանդում
«Ե.1» Նկարչություն, կերպարվեստ
«Ե.2» Ճատրակ (շախմատ)

Յուրաքանչյուր ուսումնական խմբում վերապատրաստման ժամաքանակը կազմում է 120 դասաժամ, որը կարող է լրացվել ուսումնական վայրում՝ լսարանային պայմաններում, կա՛մ արտագնա գործնական պարապմունքների վայրում, կա՛մ թանգարանային ուսուցման ձևաչափով:

Ուսումնական ծրագրի համար առաջնային է հանդիսանում սփյուռքահայ ուսուցչի կողմից դասավանդվող առարկան և դպրոցի տեսակը: «Դ. Հայոց լեզվի և գրականության դասավանդում» խմբում արևմտահայերենի և արևելահայերենի ենթածրագրերն արևմտահայերեն կամ արևելահայերեն դասավանդող ուսուցիչների համար, սակայն, պարտադիր են: Առանձին երկրներին հատուկ մնացած առանձնահատկությունների հանգամանքը առաջնային չի համարվում և կարող է քննարկվել ենթածրագրերի մակարդակում միայն հնարավորության դեպքում:

Բոլոր ուսումնական ծրագրերը պետք է գերազանցապես կրեն մեթոդական և գործնական բնույթ, ինչպես նաև նպատակաուղղված լինեն հայ մշակույթի վերաբերյալ նոր գիտելիքների փոխանցմանը, հայ պատմագիտության մեջ նոր միտումների ներկայացմանը և արդիական հիմնախնդիրների հետ կապված փաստական նյութերի և կարծիքների փոխանցմանը: «Հոգեբանություն» և «Էթնիկ հոգեբանություն» դասընթացների ներառումը պարտադիր է բոլոր խմբերում: Բոլոր խմբերում կարող են նախատեսվել արտագնա գործնական պարապմունքներ: Գործնական պարապմունքները կարող են անցկացվել թե՛ ուսումնական վայրում և թե՛ արտագնա (օրինակ՝ թանգարանում, դաստիարակչական կենտրոնում կամ այլ լրացուցիչ ուսումնական հաստատությունում):

Ուսումնական ծրագրերը համաձայնեցվում են Պատվիրատուի հետ: Պատվիրատուն կարող է հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով: Ծրագրի նախագիծը ներկայացվում է Պատվիրատուին, ներկայացված ձևաչափին համապատասխան (տես. Հավելված 1), վերապատրաստման ծրագրի մեկնարկից 20 օր առաջ: Ուսումնական ծրագրերի վերջնական տարբերակը ներկայացվում է Պատվիրատուին առնվազն 17 օր առաջ:

Վերապատրաստման ծրագրից առնվազն 13 օր առաջ Պատվիրատուին է ներկայացվում ուսումնական ծրագրերում ներառված դասընթացների թեմատիկ բացվածքը՝ Պատվիրատուի կողմից ներկայացված ձևաչափին համապատասխան (տես. Հավելված 2): Մինչև ծրագրի մեկնարկը պատվիրատուն կարող է հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով՝ թեմատիկ բացվածքի վերաբերյալ:

Օրվա ժամանակացույցը և շաբաթական դասացուցակը ներկայացվում է Պատվիրատուին ծրագրի մեկնարկից առնվազն 1 շաբաթ առաջ: Յուրաքանչյուր հաջորդող աշխատանքային շաբաթվա դասացուցակը ներկայացվում է Պատվիրատուին և մասնակից ուսուցիչներին ոչ ուշ քան նախորդող շաբաթվա ուրբաթ օրը:

Մինչև ծրագրի մեկնարկը Կատարողն ապահովում է դասախոսների տեքստերի, մեթոդական ուղեցույցների և մասնակից ուսուցիչների համար երաշխավորվող ուսումնական նյութերի առկայությունը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

Ուսումնական ծրագիրն ամփոփվում է մասնակից ուսուցիչների խմբակային զեկույցներով: Զեկույցների բովանդակությունը և ձևաչափը սահմանվում է Կատարողի կողմից և համակարգվում է ուսումնական ծրագրերի համակարգողների կողմից:

Վեց ուսումնական ծրագրերով վերապատրաստման դասընթաներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

«Ա. Ուսուցում մանկապարտեզում» խմբում, պարտադիր նախատեսվում է դասավանդում հետևյալ բովանդակության շուրջ՝ համապատասխան տարիքային խմբի ուսումնական առանձնահատկություններին համապատասխան.

- Գրաճանաչության մեթոդիկա (հայախոս և օտարախոս երեխաների համար)
- Խոսքի զարգացման մեթոդիկա (հայախոս և օտարախոս երեխաների համար)
- Մանկական գրականություն
- Մանկապարտեզում պարերի, երգի, նկարչության, ձեռքի աշխատանքի դասավանդում, խաղերի անցկացում
- Մանկական հանդիսությունների կազմակերպում
- Ներառական կրթություն

Դասընթացների ցանկը, ժամաքանակը և թեմաների ցանկը որոշում է Կազմակերպությունը: Բացի պարտադիր բովանդակությամբ դասընթացներից՝ ծրագիրը կարող է նախատեսել տվյալ խմբի կրթական և մշակութային-լուսավորչական պահանջներից բխող այլ բովանդակությամբ դասընթացներ և աշխատանքներ:

Նախադպրոցական դաստիարակության հաստատություն երկու այցելության կազմակերպումը պարտադիր է:

Ուսումնական ծրագրի բովանդակության 60-75% պետք է լինեն գործնական պարապմունքներ:

Վերապատրաստման արդյունքում ուսուցիչները պետք է.

1) իմանան նախադպրոցական ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջները, երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները,
2) կարողանան անհատական աշխատանք կազմակերպել բոլոր երեխաների հետ, ուսումնական պահանջներին համապատասխան և հաշվի առնել լեզվական գործոնը,
3) տիրապետեն գրաճանաչության, ընթերցանության տեխնիկայի ձևավորման և խոսքի զարգացման մեթոդներին, խաղային տեխնոլոգիաներին, ազգային մշակույթի տարրերը մատուցելու եղանակներին, նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներին:

«Բ. Ուսուցում մեկօրյա դպրոցում» խմբում պարտադիր է դասավանդումը հետևյալ բովանդակության շուրջ.

- Գրաճանաչության և տարրական ուսուցման մեթոդիկա (6-10, 10-18 և 18-ից բարձր տարիքային հայախոս և օտարախոս խմբերի համար)
- Խոսքի (բանավոր) զարգացման մեթոդիկա (6-10, 10-18 և 18-ից բարձր տարիքային հայախոս և օտարախոս խմբերի համար)
- Մանկական գրականություն
- Հայոց լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկա
- Հայոց պատմություն
- Հայ մշակույթի պատմություն
- Հայրենագիտություն
- Ազգային երգ-երաժշտություն
- Միջոցառումների կազմակերպում
- Ուսումնական ծրագրի կազմում, դասընթացի կառավարում (վերջնարարդյունքի որոշում մեթոդների սահմանանում, գնահատում)

Դասընթացների ցանկը, ժամաքանակը և թեմաների ցանկը որոշում է Կազմակերպությունը: Բացի պարտադիր բովանդակությամբ դասընթացներից՝ ծրագիրը կարող է նախատեսել տվյալ խմբի կրթական և մշակութային-լուսավորչական պահանջներից բխող այլ բովանդակությամբ դասընթացներ և աշխատանքներ:

Ուսումնական ծրագրի բովանդակության 60-75% պետք է լինեն գործնական պարապմունքներ:

Վերապատրաստման արդյունքում ուսուցիչները պետք է.

1) իմանան տարբեր տարիքի և ունակությունների տեր մարդկանց հետ աշխատելու հոգեբանական առանձնահատկությունները,
2) կարողանան հաշվի առնել տարբեր տարիքային խմբերում կրթական պահանջները, կողմնորոշվել օտարախոս միջավայրում,
3) տիրապետեն մեկօրյա կրթական հաստատություններում գործունեություն իրականացնելու մեթոդներին, հնարներին, օտարախոսներին հայերենը որպես երկրորդ լեզու մատուցելու հմտություններին, ազգային պատմությանը և մշակույթին, հանդիսություններ կազմակերպելու տեխնոլոգիաներին, նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներին, վերջնարդյունքը որոշելու և գնահատելու հմտություններին:

«Գ. Տարրական ուսուցում» խմբում պարտադիր է դասավանդումը հետևյալ բովանդակության շուրջ՝ համապատասխան տարիքային խմբի ուսումնական առանձնահատկություններին համապատասխան.

- Գրաճանաչության և տարրական ուսուցման մեթոդիկա (հայախոս և օտարախոս խմբերի համար)
- Խոսքի (բանավոր, գրավոր) զարգացման մեթոդիկա (հայախոս և օտարախոս խմբերի համար)
- Մանկական գրականություն
- Նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ
- Հայրենագիտություն և պատմության դասավանդման մեթոդիկա տարրական դպրոցում
- Հանդեսների և թատերական ներկայացումների կազմակերպում
- Ներառական կրթություն
- Հայ մանկավարժության պատմության էջեր

Դասընթացների ցանկը, ժամաքանակը և թեմաների ցանկը որոշում է Կազմակերպությունը: Բացի պարտադիր բովանդակությամբ դասընթացներից՝ ծրագիրը կարող է նախատեսել տվյալ խմբի կրթական և մշակութային-լուսավորչական պահանջներից բխող այլ բովանդակությամբ դասընթացներ և աշխատանքներ: Խրախուսելի է վարպետաց դասերի կազմակերպում:

Ուսումնական ծրագրի բովանդակության 60-75% պետք է լինեն գործնական պարապմունքներ:

Վերապատրաստման արդյունքում ուսուցիչները պետք է.

1) իմանան երեխաների տարիքային առանձնահատկությունները, տարրական դպրոցին ներկայացվող կրթական պահանջներն ու չափորոշիչները,
2) կարողանան աշխատել օտարախոս երեխաների հետ, կապել նրանց մայրենիի ու ազգային մշակույթի հետ,
3) տիրապետեն լեզվական և գրական գիտելիքների, մայրենիի ուսուցման առանձնահատկություններին, մեթոդներին, խոսքի զարգացման միջոցներին, ինտեգրված դաս կազմակերպելու հմտություններին, նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներին, հանդեսների կազմակերպման հմտություններին:

«Դ. Հայոց լեզվի և գրականության դասավանդում» խմբում պարտադիր է դասավանդումը հետևյալ բովանդակության շուրջ՝ համապատասխան տարիքային խմբի ուսումնական առանձնահատկություններին համապատասխան.

- Հայ գրականության պատմություն
- Գրականության դասավանդման մեթոդիկա
- Հայերեն (արևելահայերեն և արևմտահայերեն)
- Լեզվի դասավանդման մեթոդիկա (արևելահայերեն և արևմտահայերեն)
- Խոսքի զարգացում
- Ասմունք, հանդեսների կազմակերպում
- Հայոց պատմություն
- Ներառական կրթություն
- Նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներ
- Ինքնուրույն և կորպորատիվ աշխատանքի կազմակերպում

Դասընթացների ցանկը, ժամաքանակը և թեմաների ցանկը որոշում է Կազմակերպությունը: Բացի պարտադիր բովանդակությամբ դասընթացներից, ծրագիրը կարող է նախատեսել տվյալ խմբի կրթական և մշակութային-լուսավորչական պահանջներից բխող այլ բովանդակությամբ դասընթացներ և աշխատանքներ: Խրախուսելի է վարպետաց դասերի կազմակերպում:

Ուսումնական ծրագրի բովանդակության 50-60% պետք է լինեն գործնական պարապմունքներ:

Վերապատրաստման արդյունքում ուսուցիչները պետք է.

1) իմանան միջին և ավագ վարժարանների աշակերտների տարիքային առանձնահատկությունները, այդ դասարաններին ներկայացվող կրթական պահանջներն ու չափորոշիչները,
2) կարողանան կապել աշակերտներին հայոց լեզվի, գրականության, պատմության ու մշակույթի հետ,
3) տիրապետեն լեզվական և գրական համակարգված գիտելիքների, ազգային մշակութային արժեքներին, պատմության դրվագներին, ուսուցման մեթոդներին, նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներին:

«Ե.1 Նկարչություն, կերպարվեստ» խմբում պարտադիր է դասավանդումը հետևյալ բովանդակության շուրջ՝ հաշվի առնելով 6-14 և 14-18 տարիքային խմբեր.

- Հայկական արվեստի պատմության դրգավներ
- Հայ արվեստը՝ համաշխարհայինի համատեքստում
- Նկարչության կապն արվեստի այլ ճյուղերի հետ
- Ժամանակակից արվեստում առկա միտումներ
- Մանկական արվեստ և նկարչության մեթոդիկա
- Ասեղնագործության դասավանդման մեթոդիկա
- Գորգագործության դասավանդման մեթոդիկա
- Արվեստը՝ կիրառական ոլորտում
- Ազգային և գեղագիտական դաստիարակության մեթոդիկա
- Հայկական տարազ
- Պատմության և գրականության դասավանդում՝ արվեստի ուսուցման միջոցով:

Դասընթացների ցանկը, ժամաքանակը և թեմաների ցանկը որոշում է Կազմակերպությունը: Բացի պարտադիր բովանդակությամբ դասընթացներից՝ ծրագիրը կարող է նախատեսել տվյալ խմբի կրթական և մշակութային-լուսավորչական պահանջներից բխող այլ

բովանդակությամբ դասընթացներ և աշխատանքներ: Ուսումնական խմբի առնվազն 30 դասաժամ պետք է հատկացվի արտագնա գործնական պարապմունքներին, թանգարանային ուսումանը կամ վարպետաց դասերին: Իսկ ընդհանուր ժամաքանակի 60-75% (ներառյալ վերոնշված 30 դասաժամը) պետք է լինեն գործնական պարապմունքներ:

Վերապատրաստման արդյունքում ուսուցիչները պետք է.

1) իմանան լրացուցիչ և արտադասարանական կրթությանը ներկայացվող պահանջները, սովորողի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները,
2) կարողանան խմբակներ հաճախող երեխաների մեջ սեր ու մշակութային պահանջմունքներ ձևավորել ազգային արժեքների նկատմամբ,
3) տիրապետեն արվեստագիտական գիտելիքների, գործնական հմտությունների, արվեստի առանձին ճյուղերի դասավանդման և դաստիարակության մեթոդիկաներին, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին:

«Ե.2 Ճատրակ (շախմատ)» խմբում պարտադիր է դասավանդումը հետևյալ բովանդակության շուրջ:

- Շախմատի համառոտ պատմություն
- Շախմատի խաղատախտակի և խաղաքարերի քայլերի ուսուցման մեթոդիկան
- Շախմատ խաղի նպատակը: Շախ, մատ և պատ
- Շախմատ խաղի էթիկան
- Մատային դիրքեր ծանր ֆիգուրներով
- Մեկ քայլանի մատեր ծանր ֆիգուրներով
- Ոչ-ոքին շախմատում
- Փոխատեղում, զինվորի փոխարկում և զինվորի կողանցիկ վերցնել յուրահատուկ քայլերի ուսուցման մեթոդիկան
- Ծանր ֆիգուրներով երկքայլանի մատերի ուսուցման մեթոդիկան
- Կրկնակի հարված և կապ մարտավարական հնարքների ուսուցման մեթոդիկան
- Սկզբնախաղի սկզբունքները
- Պարզագույն զինվորային վերջնախաղերի ուսուցման մեթոդիկան
- Ազգային դաստիարակության մեթոդներ

Դասընթացների ցանկը, ժամաքանակը և թեմաների ցանկը որոշում է Կազմակերպությունը:

Վերապատրաստման արդյունքում ուսուցիչները պետք է.

1) իմանան սովորողի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, ճատրակի նրբությունները,
2) կարողանան խմբակներ հաճախող երեխաների մեջ արմատավորել սեր ճատրակի և շախմատի ոլորտում հետաքրքրություն Հայաստանի հաջողությունների նկատմամբ՝ հատկապես շեշտելով, որ այն հայ ժողովրդի համար միջազգային հարթակներում ներկայանալիություն ապահովող արվեստ է, նաև այն, որ ճատրակն օգնում է առհասարակ ավելի արագ կողմնորոշվել դժվարին իրավիճակներում, զարգացնում է երևակայությունը, տրամաբանական մտածողությունը,
3) տիրապետեն շախմատի դասավանդման մեթոդներին, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաներին, դաստիարակության մեթոդիկային:

III. Դասախոսական կազմ

Ուսումնական ծրագիրն ապահովող դասախոսական կազմն ընտրվում է Կատարողի կողմից: 6 ուսումնական ծրագրում ընդգրկված մասնագետների առնվազն 60%-ը պետք է ունենան գիտական, մասնավորապես՝ մանկավարժության ոլորտում գիտական աստիճան: Յուրաքանչյուր դասախոսի համար սահմանվում է 4 նվազագույն և 24 առավելագույն դասաժամ ծանրաբեռնվածություն: Նվազագույն ժամաքանակով ծանրաբեռնվածություն ունեցող դասախոսների թիվը չպետք է գերազանցի դասախոսների ընդհանուր թվի 20%-ի:

Դասախոսական կազմի առնվազն 20%-ը պետք է հանդիսանան դասագրքերի, մեթոդական ուղեցույցների, աշխատանքային տետրերի և այլ հիմնական ու օժանդակ նյութերի հեղինակներ: Նախապատվությունը պետք է տրվի սփյուռքի հետ աշխատանքի փորձ ունեցողներին:

Դասախոսների նախնական ցանկը Պատվիրատուին ներկայացվում է վերապատրաստման ծրագրի մեկնարկից առնվազն 17 օր առաջ: Դասախոսների վերջնական ցանկը ներկայացվում է ուսումնական ծրագրի թեմատիկ բացվածքի հետ միասին՝ համաձայն կցվող ձևաչափերի (Հավելված 3) մինչև ծրագրի մեկնարկը:

IV. Արտալսարանային ուսումնական և մշակութային ծրագիր

Արտալսարանային ուսումնական և ճանաչողական միջոցառումները նպատակաուղղված են այլընտրանքային, ոչ ֆորմալ մեթոդներով լրացնելու դասընթացների միջոցով իրագործվող ուսումնական ծրագիրը, ծանոթացնելու մասնակցին Հայաստանի Հանրապետության կյանքի տարբեր ոլորտներին: Միջոցառումների շարքը պարտադիր պետք է ներառի.

1) հանդիպումներ՝ քաղաքական, կրթամշակութային կամ հասարակական գործիչների հետ.
3) շրջայցեր.
4) այցելություններ պատմամշակութային և տեսարժան վայրեր, թատրոններ, թանգարաններ, մասնակցություն միջոցառումներին:

Արտալսարանային ծանրաբեռնվածությունը չի ներառվում պարտադիր ուսումնական ծանրաբեռնվածության մեջ:

Երևանի ներսում արտալսարանային միջոցառումները կազմակերպվում են ուսումնական օրերին՝ օրվա երկրորդ կեսին և շաբաթ կամ կիրակի օրերին: Շրջայցերը կազմակերպվում են շաբաթ կամ կիրակի օրերին՝ 6 ժամից ոչ պակաս և 12 ժամից ոչ ավելի տևողությամբ:

Արտալսարանային միջոցառումների ընդհանուր քանակը ըստ միջոցառման տեսակների հետևյալն է.

1) թանգարաններ՝ առնվազն 4
2) այլ մշակութային միջոցառումներ՝ առնվազն 4
3) շրջայցեր՝ 6, որից Սբ.Էջմիածին շրջայցը պարտադիր է:
4) հանդիպումներ՝ առնվազն 5, որից 3-ը՝ առաջարկվում և ապահովվում են Պատվիրատուի կողմից:

Վերջին 2 աշխատանքային օրերին ճաշից հետո լրացուցիչ միջոցառումներ չեն նախատեսվում, այլ անցկացվում է մասնակից ուսուցիչների զեկույցների շարքը: Դասացուցակը ձևափոխելու դեպքում՝ զեկույցներին (կոնֆերանսի ձևաչափով) կարելի է հատկացնել վերջին մեկ աշխատանքային օր:

Արտալսարանային ուսումնական և մշակութային ծրագիրը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Արտաուսումնական և մշակութային ծրագրի նախագիծը ներկայացվում է վերապատրաստման ծրագրի մեկնարկից 10 օր առաջ: Այդ ժամանակ կարող է ներկայացվել ծրագրի միայն 80%-ը: Հանդիպումների և մշակութային միջոցառումների (թանգարաններ, փառատոններ, հանդիպումներ) ցանկը և ժամանակացույցը կարող է փոփոխությունների ենթարկվել նաև վերապատրաստման ժամանակահատվածում: Բոլոր փոփոխությունները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

V. Կեցություն

Կացարանը պետք է գտնվի Երևան քաղաքում: Այն պետք է ունենա առնվազն 40 անձ տեղավորելու հնարավորություն: Սենյակները պետք է լինեն հարմարավետ և նախատեսված լինեն առավելագույնը 4 մասնակցի համար:

Սենյակներում պետք է լինեն սառնարան, սանհանգույց, լողարան, օդորակիչ և անլար համացանցի հնարավորություն: Սենյակները պետք է ապահովված լինեն շուրջօրյա սառը և տաք ջրով:

Կացարանի վերաբերյալ տեղեկատվությունը Պատվիրատուին ներկայացվում է վերապատրաստման ծրագրի մեկնարկից 20 օր առաջ:

VI. Սնունդ

Նախաճաշն ու ընթրիքը մատուցվում են կացարանում մնացողներին՝ օրացուցային բոլոր օրերին (27 օր առավելագույնը 40 անձի համար):

Ճաշը մատուցվում է բոլոր մասնակից ուսուցիչներին, այս ժամերին դասավանդողներին և տեղում համակարգող անձնակազմին (26 օր առավելագույնը 70 անձի համար): Շրջայցերին մասնակցող ուսուցիչների թիվը ճշտվում է նախապես՝ ընթացիկ աշխատանքային շաբաթվա ընթացքում: Շրջայցերի օրերին ճաշը տրվում է ուսուցիչներին և ուղեկցողներին՝ չոր մթերաբաժնի ձևով՝ նախատեսված ճանապարհին ճաշելու համար:

Պարապմունքների օրերին երկար դասամիջոցին կազմակերպվում է սուրճ-դադարը, որին մասնակցում են ուսուցիչները, դասավանդողները և համակարգող անձնակազմը (20 օր առավելագույնը 80 անձ):

Ծրագրի բացման և փակման օրերին (հուլիսի 1-ը և 26-ը) կազմակերպվում է ֆուրշետ՝ ուսուցիչների, դասավանդողների, հյուրերի և համակարգող անձնակազմի համար (առավելագույնը 100 անձ)

Մեկ անձին հասանելիք սննդամթերքի քանակը ընդունվում է սահմանված չափորոշիչներով, իսկ ճաշացանկում ներառված հիմնական ուտեստները չպետք է կրկնվեն առնվազն 4 օրվա ընթացքում:

Ընդ որում.

Նախաճաշը պետք է ներառի.

տաք ըմպելիք (օրինակ՝ թեյ, լուծվող սուրճ, կակաո), հացաբուլկեղեն (հաց, լավաշ), կարագ, պանիր, ջեմ, քաղցրավենիք (օրինակ՝ թխվածքաբլիթ, խմորեղեն), կաթնամթերք (օրինակ՝ թթվասեր, յոգուրտ, կաթնաշոռ), տաք ուտեստ (օրինակ՝ շիլա/բրինձ, հերկուլես, ձավարեղեն, խաշած ձու, նրբերշիկ, ձվածեղ, սենդվիչներ):

Ճաշը պետք է ներառի.

սառը ըմպելիք (օրինակ՝ հյութ, թան, լիմոնադ), հացաբուլկեղեն (հաց, լավաշ), պանիր, բանջարեղեն (լոլիկ, վարունգ), աղցան (օրինակ՝ վինեգրետ, մայրաքաղաքային, կաղամբով, կորեական), տաք ապուր (օրինակ՝ սպաս, սուպ, բորշ), տաք ուտեստ (օրինակ՝ մսով տոլմա, կիևյան կոտլետ կամ հավ խավարտով (կարտոֆիլ, խորոված բանջարեղեն, փլավ, կանաչ լոբի), մսով և կարտոֆիլով սոուս), մայոնեզ, կետչուպ:

Ընթրիքը պետք է ներառի.

սառը ըմպելիք (օրինակ՝ հյութ, թան), հացաբուլկեղեն (հաց, լավաշ), պանիր, բանջարեղեն (լոլիկ, վարունգ), աղցան (օրինակ՝ վինեգրետ, մայրաքաղաքային, կաղամբով, կորեական), տաք ուտեստ (օրինակ՝ կարտոֆիլ, խորոված բանջարեղեն, բլինչիկ մսով, կարկանդակ, դդմիկով կոտլետ, սենդվիչներ):

Չոր մթերաբաժինը (նախատեսված հեռավոր շրջայցների օրերին ճաշելու համար) պետք է ներառի.

սառը ըմպելիք (օրինակ՝ հյութ, թան, լիմոնադ), սենդվիչներ (օրինակ՝ տավարի մսի կոտլետով և կարտոֆիլով, կիսաապխտած երշիկով և կարտոֆիլով, հավով և կարտոֆիլով), հացը պանրով, բանջարեղեն (լոլիկ, վարունգ), մայոնեզ, կետչուպ:

Ֆուրշետը պետք է ներառի (նախատեսված է բացման և փակման արարողությունների օրերին).

միրգ, խմորեղեն, գինի կամ շամպայն, կանապե, սառը ըմպելիքներ, սուրճ սև, սուրճ լուծվող, թեյ:

Սուրճի ընդմիջումը պետք է ներառի.

Սուրճ, թեյ, միրգ, խմորեղեն կամ թխվածքաբլիթ, հյութ կամ սառը ըմպելիք:

Մեկամսվա ճաշացուցակը և սնունդ մատակարարող կազմակերպության մասին տեղեկությունները Պատվիրատուին ներկայացվում են վերապատրաստման ծրագրի մեկնարկից 20 օր առաջ:

VII. Տրանսպորտ

Տրանսպորտային միջոցները պետք է լինեն բարեկարգ, մաքուր, համապատասխանեն տեխնիկական անվտանգության կանոններին, ունենան օդորակիչ:

Տրանսպորտային միջոցներն անհրաժեշտ են.

1. Երևան քաղաքում փոխադրումներ իրականացնելու համար հետևյալ դեպքերում.

ա. արտալսարանային ծրագրի իրագործման ընթացքում (առավելագույնը 10 անգամ առավելագույնը 65 անձի համար),

բ. գործնական պարապմունքների կազմակերպման համար (առավելագույնը 15 անգամ առավելագույնը 15 անձի համար, թիվը 2 հոգու շեղվածությամբ ճշգրտվում է մասնակիցների ցուցակն ամփոփելուց հետո),

գ. կացարանից ուսումնական վայր, եթե կացարանը չի գտնվում է 5-7 րոպե քայլելու հեռավորության վրա (20 օր առավելագույնը 40 անձի համար):

Յուրաքանչյուր օրվա վերջում երթուղին ավարտվում է կեցության վայրում:

2. Երևանից դուրս շրջայցերի ընթացքում՝ մշակութային ծրագրով սահմանված երթուղիներով (6 օր առավելագույնը 70 անձ): Փաստացի տեղերի թիվը ճշտվում է ընթացիկ աշխատանքային շաբաթվա ընթացքում:

Պատվիրատուն պետք է տեղեկացված լինի Երևան քաղաքում և Երևանից դուրս շրջայցերի ընթացքում օգտագործվող տրանսպորտային միջոցների մասին ոչ ուշ քան վերապատրաստման ծրագրի մեկնարկից 20 օր առաջ:

VIII. Ուսումնական տարածք

Պարապմունքների համար նախատեսված ուսումնական տարածքը պետք է ունենա 6 լսարան, որից 4-ը տեղավորեն մինչև 15 անձ, իսկ երկուսը՝ մինչև 25 անձ: Լսարանները պետք է լինեն չոր, լուսավոր և ունենան օդորակիչներ:

Ուսումնական տարածքը պետք է տեխնիկապես զինված լինի առնվազն երկու երևակով, համակարգչով և համացանցի հնարավորությամբ:

Տարածքում պետք է լինի պատճենահանման հնարավորություն:

Տարածքը պետք է ունենա պարասրահ (կամ պարերի պարապմունքների համար հարմար տեղ), մագնիտոֆոն և դաշնամուր, ինչպես նաև ակտային դահլիճ՝ առնվազն 80 անձի համար:

Ուսումնական տարածքում պետք է լինի ազատ օգտագործման սանհանգույց և մաքուր խմելու ջուր՝ պարապմունքների ողջ ժամանակահատվածում:

Ուսումնական տարածքում պետք է նախատեսված լինի առանձին սենյակ՝ դասախոսական կազմի համար՝ համակարգչով, տպիչով, հեռախոսով և համացանցի հնարավորությամբ:
Պատվիրատուն պետք է տեղեկացված լինի վերապատրաստման ընթացքում շահագործվող ուսումնական տարածքի մասին ոչ ուշ քան վերապատրաստման ծրագրի մեկնարկից 10 օր առաջ:

IX. Գրասենյակային ծախսեր

Վերապատրաստման ընթացքում դասախոսական անձնակազմը պետք է ապահովված լինի իր աշխատանքի համար անհրաժեշտ գրենական պիտույքներով: Պիտույքների ցանկը ներկայացվում է դասախոսների կողմից: Ուսուցիչներին տրամադրվում են տպագրված դասացուցակը, առաջին շաբաթվա արտալսարանային ու մշակութային միջոցառումների ժամանակացույցը, նոթատետր, գրիչ և անվանանշան:

Ծառայության մատուցման վերջում տպագրվում են ուսուցիչների մասնակցության մասին վկայականներ, որոնց բովանդակությունը սահմանվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. թիվ 1246-Ն հրամանով հաստատված «Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստման կազմակերպման մասին» կարգով և համաձայնեցվում է Պատվիրատուի հետ վերապատրաստման ծրագրի ավարտից 10 աշխատանքային օր առաջ: Վկայականները պետք է տպագրվեն 200գր հաստության A4 չափի առանց փայլի թղթի վրա, տպագրությունը պետք է լինի միակողմանի, գունավոր:

**Մատուցման ժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ռ. Միրզախանյան

Հավելված N 2
«25» 06 2019թ. կնքված
«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր /մինչև 20-ը/	Ընդամենը
1	79631200-1	Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայություններ	-	-	-	-	-	-	3299400	32994000	32994000	32994000	32994000	32994000	32994000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ս. Մուրադյան

ԿԱՏԱՐՈՂ

Ռ. Միրզախանյան